

ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԸ ՈՐՊԵՍ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ

Սյուզաննա Գրիգորյան

Երևանի պետական համալսարան

Կյանքի ցանկացած փուլում, ինչպես նաև ցանկացած միջավայրում մարդիկ անպայմանորեն շփվում են միմյանց հետ՝ տեղեկատվություն են փոխանակում, կիսվում իրենց մտքերով և կենսափորձով: Փոխադարձ շփումների ընթացքում մարդիկ սովորաբար ձգտում են ազդեցություն և տպավորություն գործել միմյանց վրա: Այսպիսով՝ խոսքային գործունեության ընթացքում տեղի է ունենում մտքերի փոխանակում բանավոր կամ գրավոր ձևով, կիրառվում են լեզվական և արտալեզվական միջոցներ, և ստեղծվում է կապակցված խոսքի հաղորդակցական միավոր՝ դիսկուրս: Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել դիսկուրսի հաղորդակցական-գործառական տեսակներից մեկի՝ գերատեսչական դիսկուրսի (այսուհետ՝ ԳԴ) գործաբանական առանձնահատկությունները:

Բանալի բառեր. հաղորդակցություն, գերատեսչական դիսկուրս, գերատեսչական երկխոսություն, գործաբանություն, խոսքահերթ, անձի վերաբերություն:

Ներածություն

Ժամանակակից հանրալեզվաբանական և գործաբանական հետազոտություններից պարզ է դառնում, որ խոսելիս մարդիկ իրականացնում, հաստատում են իրենց հասարակական իսկությունը: Ըստ այդմ, մտքերի փոխադարձման միջոցով ստեղծվում է իրականության և իսկության պատկեր: Դիսկուրսի ճանաչողական քննությունն էլ ցույց է տալիս, որ վերջինս մտածողական գործունեություն է, գիտելիքի օրինաչափ կողավորման հարաշարժ համակարգ (Պարոնյան 2011:8): Ներկայումս դիսկուրսն ուսումնասիրվում է տարբեր լեզվաբանական դիտանկյուններով՝ գործաբանական, ճանաչողական, ռճաբանական, մշակութաբանական և այլն: Դիսկուրսի, մասնավորապես՝ գերատեսչական դիսկուրսի լեզվական և արտալեզվական հատկանիշների ուսումնասիրությունը գործաբանության ճյուղերից մեկի՝ դիսկուրսի տեսության արդիական խնդիրներից է: Բազմաշերտ սոցիալական խմբերն ու տարբեր գերատեսչություններում աշխատանքային գործունեություն ծավալող անհատներն ունեն հասարակության տվյալ շերտի համար ընդունելի համարվող գաղափարախոսություններ, պատկերացումներ, նպատակներ և աշ-

խարհայացք, որոնք ակնհայտ են դառնում խոսքային գործունեության ընթացքում: Ուստի բնական է, որ հասարակության յուրաքանչյուր շերտ ունի իրեն բնորոշ խոսելաձև՝ բարբառ, ժարգոն, սլենգ և խոսելաճ՝ պաշտոնական, ոչ պաշտոնական, խոսակցական, և այլն: Խոսքի այս տարաբնույթ տարբերակների ուսումնասիրությամբ ավանդաբար զբաղվել են բարբառագիտության, բառագիտության, ոճագիտության ոլորտի մասնագետները: Դիսկուրսի տեսության շրջանակներում կատարվող գործաբանական ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ մասնագիտական խմբերի խոսքը նույնպես տարբերվում է միմյանցից, և որ այդ խմբերից յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ լեզվամշակույթ (Mayr 2008:1-6):

Գերատեսչական դիսկուրս

Երկար ժամանակ է, ինչ գերատեսչությունները և դրանց գործունեության ձևերը լրատվական, մշակութային և կազմակերպչական ուսումնասիրությունների առարկա են: Համեմատաբար վերջերս, գործաբանական լեզվաբանության զարգացման շնորհիվ, դրանք դարձել են նաև լեզվաբանական ուսումնասիրությունների առարկա: Դիսկուրսի վերլուծաբանները եկել են այն համոզման, որ գերատեսչությունները ստեղծվում և ձևավորվում են լեզվի միջոցով: Միևնույն ժամանակ գերատեսչություններում ստեղծվում և ձևավորվում է կապակցված խոսքի յուրահատուկ ձև՝ գերատեսչական դիսկուրս: Դ. Մամբին և Ռ.Քլեյրը նշում են, որ գերատեսչություններն ու կազմակերպությունները գոյություն ունեն միայն այն պատճառով, որ դրանց անդամները ստեղծում են դրանք դիսկուրսի միջոցով (տե՛ս Tannen, Hamilton, Schiffrin 2015:775): Սա չի նշանակում, որ գերատեսչությունները և դիսկուրսը նույնացվում են, պարզապես գերատեսչական դիսկուրսը՝ աշխատանքային հարցերին առնչվող խոսքը, այն հիմնական միջոցն է, որով տվյալ հաստատության անդամները որոշակի հասարակական դեր և ինքնություն ունեցող ներդաշնակ և համապարփակ խումբ են ստեղծում: Այսպիսով, գերատեսչական դիսկուրսը, կամ ինչպես որոշ լեզվաբաններ են անվանում, մասնագիտական դիսկուրսը (Kenneth 2014), դիսկուրսի հաղորդակցական տեսակներից է, որն ունի կիրառության հստակ և որոշակի դաշտ, այն է՝ աշխատանքային իրադրությունը:

Դիսկուրսի ցանկացած տարատեսակ ունի իրեն բնորոշ լեզվական և արտալեզվական, գործառական և գործաբանական առանձնահատկություններ: Սա է թերևս այն պատճառը, որ շատ լեզվաբանների պնդմամբ, դիմացիմի խոսքի ճիշտ ըմբռնումը պայմանավորված է խոսակիցների հենքային գիտելիքների ընդհանրությամբ և մշակութային տեղեկացվածության աստիճանով: Խոսքն ընկալելիս անշուշտ մեծ է նաև արտալեզվական գործոնների դերը՝ հույզեր, զգացմունքներ, սթրես, անհանգստություն, անսպասելի ուրախութ-

յուն, հոգեվիճակ, և այլն: Որոշակի խնդիրների դեպքում, վերոնշյալ գործոններով պայմանավորված՝ հաղորդակցման գործընթացը կարող է ձախողվել (Պարոնյան 2011:141):

Հարկ է նշել, որ ԳՂ-ն ուսումնասիրելիս տվյալ դիսկուրսի ասույթները զուգադրվում և համեմատվում են առօրյա-խոսակցական խոսքի հետ կամ դիսկուրսի այլ տարատեսակների նմուշների հետ: Փ.Գրյուի և Ջ.Հերիթիջի պնդմամբ, ԳՂ-ի ուսումնասիրությունն ու վերլուծությունը կատարվում է մասնավորապես առօրյա-խոսակցական դիսկուրսի հետ համեմատելով, քանի որ վերջինս հասարակական կյանքում հաղորդակցման առաջին և առաջնային ձևն է (Drew, Heritage 1992:19):

Անդրադառնանք ԳՂ-ի տարատեսակներից մեկին՝ գերատեսչական երկխոսությանը: Գերատեսչական երկխոսության ուսումնասիրությունը որպես առանձին ուսումնասիրության ոլորտ ի հայտ եկավ նախորդ դարի վերջերին հանրալեզվաբանության, դիսկուրսի վերլուծության, երկխոսության վերլուծության և գիտության մի շարք համանման ճյուղերի զարգացման արդյունքում: Ավանդաբար հանրալեզվաբանական ուսումնասիրությունների ուշադրության կենտրոնում են եղել լեզվական փոփոխությունները, շեղումներն ու տարբերակումները՝ ըստ հասարակական դասի, ազգային պատկանելության, տարիքի և սեռի: Մոտավորապես 30 տարի առաջ լեզվաբանները սկսեցին մանրակրկիտ կերպով վերլուծել գործնական հարցազրույցների, դատական լսումների, բժշկական խորհրդատվության, դատական գործընթացների լեզուն: Նրանց նպատակն էր ցույց տալ, որ խոսքը, հասարակական, տարածական, լեզվական գործոններից բացի, պայմանավորված է նաև խոսքընկերների գերատեսչական ինքնությամբ ու պատկանելությամբ (van Dijk 1997:94): Այլ կերպ ասած՝ ԳՂ- ուսումնասիրությունները փաստում են, որ խոսքում առկա են որոշակի լեզվական տարբերություններ ըստ սոցիալական համատեքստի՝ անկախ խոսքընկերների ազգային պատկանելության, տարիքային կամ այլ տարբերությունների:

Այսպիսով, դիսկուրսը համարվում է գերատեսչական, երբ այն (տվյալ դեպքում՝ երկխոսությունը) տեղի է ունենում երկու կամ ավելի անձանց միջև, որոնցից առնվազն մեկ խոսակիցը որևէ կազմակերպության կամ գերատեսչության ներկայացուցիչ է, և երբ խոսակիցների հաղորդակցական նպատակներն ու մտադրությունները մասամբ պայմանավորված են տվյալ գերատեսչության նպատակներով (Drew, Heritage 1992:22): Գերատեսչական երկխոսությունը կարող է տեղի ունենալ դեմ առ դեմ, հեռախոսազրույցի կամ էլեկտրոնային նամակագրության միջոցով: Թեև նմանատիպ երկխոսությունները հաճախ ընթանում են որևէ կոնկրետ գերատեսչական հաստատության ներսում, ինչպես օրինակ կազմակերպություններում, ձեռնարկություններում, հիվանդանոցներում, կրթական հաստատություններում, դատարանում և այլն, հարկ է

ընդգծել, որ դրանք չեն սահմանափակվում միայն նշված տեղանքներով: Ուստի այն վայրերը, որոնք սովորաբար չեն համարվում գերատեսչական հաստատություններ, ինչպես օրինակ, սրճարանը, ժամանցի վայրերը, առանձնատունը, զբոսայգին, երբեմն կարող են դառնալ որևէ գերատեսչական թեմայով զրուցելու հարմար վայր, որտեղ, օրինակ, կարող է տեղի ունենալ գործարար հարցազրույց կամ գործնական խորհրդատվություն: Ինչ խոսք, կազմակերպության աշխատակիցները միայն իրենց աշխատանքի ժամերին չէ, որ գործարար հաղորդակցում են կատարում: Մյուս կողից էլ, շատ հաճախ նրանք աշխատավայրում զրուցում են կենցաղային, ընտանեկան և անձնական թեմաներով՝ դիսկուրսը դարձնելով առօրյա: Ուստի կարող ենք եզրակացնել, որ դիսկուրսի գերատեսչական լինելը չի պայմանավորվում միմիայն ըստ տեղանքի, այսինքն՝ ըստ այն տեղի, որտեղ այն ծավալվում է:

Փաստական նյութի քննությունը ցույց է տալիս, որ հաճախ միևնույն երկխոսության մեջ հանդիպում են գերատեսչական և առօրյա դիսկուրսին հատուկ տարրեր: Այդժամ գերատեսչական դիսկուրսի հստակ սահմանագատումը բարդանում է, և դրա ուսումնասիրությունը բախվում է հետևյալ խնդրին՝ ինչպիսի՞ հաղորդակցումը կարելի է միանշանակ համարել գերատեսչական: Ասվածն ավելի պատկերավոր դարձնելու համար դիտարկենք մեկ օրինակ .

1. A: *Hi, John. Dave here.*
2. B: *Oh, hello, Dave. How are you?*
3. A: *Fine, thanks. Listen, just a quick word.*
4. B: *Yeah go ahead.*
5. A: *Do you think you could let me have the fax number for Workplace Solutions? I can't get through to them. Their phone's always engaged.*
6. B: *I've got it here. It's 02077564237.*
7. A: *Sorry, I didn't catch the last part. Did you say 4227?*
8. B: *No, it's 4237.*
9. A: *OK. Thanks. Bye.*
10. B: *No problem. Bye.* (Cotton, Falvey, Kent 2007:145)

Ակնհայտ է, որ վերը նշված հեռախոսազրույցի նպատակն է գործնական տեղեկատվություն ստանալը: Այսինքն, կարելի է ասել՝ հաղորդակցությունը տեղի է ունենում գործարար դիսկուրսի շրջանակներում: Միևնույն ժամանակ երկխոսության 1-3 տողերն առանձնանում են ընկերական ողջույնի՝ հեռախոսազրույց սկսելու խոսքնափոխով, որը հատուկ է առօրյա դիսկուրսին: Հետևաբար, միևնույն հաղորդակցության ընթացքում խոսակիցները կարող են անցում կատարել դիսկուրսի մեկ տեսակից մյուսին: Այսպիսով, հաճախ Գ-Դ-ի և

առօրյա երկխոսության սահմանները հատակ չեն սահմանազատվում, և այդ- ժամ հաղորդակցության գերատեսչական լինելը պայմանավորված է լինում խոսակիցների գերատեսչական դերերով և պարտավորություններով: Ըստ այդմ Գ-Դ ուսումնասիրելիս քննության է առնվում հաստատության՝ որոշակի հասարակական դիրք կամ պաշտոն զբաղեցնող որևէ անդամի, աշխատակցի, ներկայացուցչի խոսքը և լուսաբանվում են դրան բնորոշ լեզվական և արտա- լեզվական առանձնահատկությունները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բացի նրանից, որ Գ-Դ-ի յու- րաբանչյուր տեսակ ունի իրեն հատուկ մասնագիտական բառապաշար, դիս- կուրսի այս տարատեսակը առանձնանում է նաև քերականական կառույցնե- րի և խոսքային ակտերի յուրահատուկ կիրառությամբ: Այսպես, Փ. Դրյուն և Մ. Սորյոնեն առանձնացնում և թվարկում են այն լեզվական միջոցները, ո- րոնք կիրառվում են խոսքային ակտի մասնակիցների կողմից՝ ցույց տալով, թե գերատեսչական դիսկուրսի որ տարատեսակին է համապատասխանում տվյալ հաղորդակցությունը: Դրանցից կարելի է նշել անձի վերաբերությունը, բառերի ընտրությունը, քերականական կառույցները, խոսքահերթի հաջորդա- կանությունը և տվյալ գերատեսչություններին բնորոշ կռահումներն ու հետևությունները (տե՛ս van Dijk 1997:97): Ըստ Ջ. Հերիթիջի, սույն լեզվական միջոցներին են պատկանում նաև դիսկուրսի ընդհանուր կառուցվածքի յուրա- հատկությունները և ասույթների հաջորդականությունը (տե՛ս Gago 2006:86):

Այժմ դիտարկենք վերոնշյալ լեզվական միջոցներից մի քանիսը և փորձենք պարզել, թե ինչով է պայմանավորվում Գ-Դ-ի տեսակը:

Նախ և առաջ սկսենք անձի վերաբերությունից: Գերատեսչական հաստա- տությունների աշխատակիցների մի շարք երկխոսությունների վերլուծությու- նը թույլ է տալիս եզրակացնել, որ նրանք իրենց մասին խոսելիս սովորաբար օգտագործում են առաջին դեմքի հոգնակի թվի անձնական դերանուն՝ մենք, *we*: Սա արվում է զուտ այն պատճառով, որ տվյալ կազմակերպության ան- դամները չեն ցանկանում ընդգծել իրենց անհատականությունը և ներկայա- նում են որպես հենց տվյալ հաստատության ներկայացուցիչ, դրա անքակտե- լի մաս: Դիտարկենք գործարար երկխոսության ստորև բերված օրինակը.

Interviewer: What range of services does Novotel London West offer for corporate entertaining?

Lionel Prenat: We offer a, a wide range of, er, of possibilities for corporate entertaining here at Novotel London West. We have a large conference room which, er, in fact can hold up to 3000, reception- style. We can do anything from a trade show, exhibition workshops,

um, seminars, conference, AGM, er, anything, er, can be done here at the Novotel London West in terms of corporate entertaining.

(Cotton, Falvey, Kent 2007:149)

Վերը նշված օրինակում հարցազրույց վարողի այն հարցին, թե ինչ ծառայություններ է առաջարկում Նովոթել Լոնդոն Ուեսթ կազմակերպությունը, աշխատակիցը պատասխանում է *we* անձնական դերանունով: Այս կերպ նա փորձում է չընդգծել իր անձը և հանդես գալ որպես հավաքական կերպար, որը ներկայացնում է ողջ կազմակերպությունը: Ինչպես նշում է Ռ. Գուդինը, *we* անձնական դերանունը նմանատիպ գործառույթ ունի նաև ռազմական հաստատություններում: Երբ գնդապետը փորձում է համոզել իր զինծառայողներին, որ նրանք բոլորն ունեն միևնույն նպատակներն ու պարտականությունները, նա իր անձը նույնականացնում է իր ռազմական ջոկատին՝ խոսքում կիրառելով *we* անձնական դերանունը (տե՛ս Mayr 2008:142):

Խոսակիցների բառերի ընտրության ուսումնասիրությունը նույնպես օգնում է բացահայտել, թե տվյալ հաղորդակցությունը ո՞ր գերատեսչական դիսկուրսին է պատկանում: Ընդ որում բառերի ընտրություն ասելով՝ չպետք է հասկանալ սոսկ տեխնիկական բառեր ու մասնագիտական տերմիններ: Խոսքը գնում է նաև այլընտրանքային այն բառերի ու բառակապակցությունների մասին, որոնք խոսողն ընտրում է մարդկանց, իրերն ու իրադարձությունները հենց տվյալ իրավիճակում նկարագրելու համար՝ ելնելով դիսկուրսի տեսակից (իրավաբանական, գործարար, բժշկական և այլն) (Drew, Heritage 1992:29):

Վերլուծենք մի երկխոսություն, որը տեղի է ունենում դատական հաստատությունում դատական լսումների ժամանակ .

*Bailiff: All rise. (Wait for everyone – except the judge – to stand.)
Department One of the Superior Court is now in session. Judge (first name) presiding. Please be seated.*

*Judge: Good morning, ladies and gentlemen. Calling the case of the people of the State of California versus (defendant's first name).
Are both sides ready?*

District Attorney: Ready for the People, Your Honor.

Public Defender: Ready for the defense, Your Honor.

Judge: Will the clerk please swear in the jury?

(<http://www.courts.ca.gov/documents/mocktrialscript-contra.pdf>)

Տվյալ գերատեսչական երկխոսության մեջ, բացի իրավաբանական բառապաշարից, առկա են նաև այնպիսի արտահայտություններ, որոնք հատուկ են

միայն դատական գերատեսչական դիսկուրսին, և, բնականաբար, տվյալ համատեքստում կիրառված բառերը և ասույթները խիստ տարբերվում են առօրյա կամ ցանկացած այլ տեսակի դիսկուրսում կիրառված բառերից և ասույթներից: Այսպես՝ ուսումնական գերատեսչական դիսկուրսում սովորաբար կիրառվող *Stand up* և *Sit down* հրաման և խնդրանք արտահայտող խոսքային ակտերի փոխարեն այստեղ օգտագործվում են *All rise* և *Please be seated* կարծրատիպային հրամայական խոսքային ակտերը:

Ինչպես բառապաշարի, այնպես էլ քերականական ցուցիչների ընտրության դեպքում առկա են մի շարք առանձնահատկություններ, որոնք հատուկ են ԳՂ-ի որոշակի տեսակներին: Թվարկենք դրանցից մի քանիսը:

Գերատեսչական դիսկուրսին՝ մասնավորապես բժիշկ-հիվանդ երկխոսությանը, բնորոշ են ասույթներ, որոնք պարունակում են պարտադրանք կամ խորհուրդ արտահայտող եղանակավորող բայեր, օրինակ՝ *You should keep a diet*, հրամայական եղանակով կազմված մախադասություններով, օրինակ՝ *Take these pills!*, ենթադրական կառույցներ օրինակ՝ *If I were you, I wouldn't use that much alcohol*: Սույն քերականական ցուցիչների կիրառումը պայմանավորված է տվյալ հաղորդակցման նպատակներով՝ բուժման խորհուրդ և հրաման:

Ք. Քիմի պնդմամբ՝ ԳՂ-ի մեկ այլ առանձնահատկություն կարելի է համարել հարցական դերանուն պարունակող կառույցի կիրառումը (WH-cleft), օրինակ՝ *what I want to suggest is...*: Ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դառնում, որ հարցական բառով կառույցը շատ ավելի հաճախ կիրառվում է պաշտոնական խոսքում՝ համալսարաններում, այլ կրթական հաստատություններում, ռադիո հաղորդաշարների, գործարար հարցազրույցների ընթացքում, քան սովորական առօրյա երկխոսության մեջ: Ավելին՝ թեև հարցական դերանուն պարունակող կառույցները գերատեսչական և առօրյա դիսկուրսում կատարում են միևնույն գործառույթները, այն է՝ անցում մեկ թեմայից կամ խոսողից մյուսին, խոսույթի բուն իմաստի շեշտադրում, Ք. Քիմի ուսումնասիրությամբ ի հայտ են եկել այդ կառույցների կիրառման որոշ առանձնահատկություններ: Այսպես, դասախոսություններում հարցական դերանուն պարունակող կառույցները օգտագործվում են խոսողի կողմից կատարված որևէ հուժկոսային ակնարկից հետո պաշտոնական խոսքին վերադառնալու նպատակով: Նույնը չի կարելի ասել առօրյա երկխոսություններում հանդիպող հարցական դերանուն պարունակող կառույցների մասին, որտեղ դրանց գործառույթը մեկ խոսակցի հեղինակության գերիշխանությունը մյուսի նկատմամբ ցույց տալն է, հատկապես խնդրահարույց կամ հակամարտահարույց իրավիճակում (տե՛ս van Dijk 1997:102):

Հարկ է անդրադառնալ նաև կրավորական կառույցներին, որոնք գերատեսչական հաղորդակցման անքակտելի մասն են կազմում: Բայի կրավորական սեռը սովորաբար կիրառվում է խոսողի անհատականությունը, կարծիքը, ես-ը չեզոքացնելու նպատակով՝ նրան ներկայացնելով որպես սոսկ տեղեկատվություն փոխանցող: Կրավորական կառույցների առատությունը անգլերենում (ինչպես նաև՝ հայերենում) բացատրվում է նրանով, որ այդ լեզուն չունի անդեմ ցուցիչներ, ինչպես իտալերենը, ֆրանսերենը և գերմաներենը (Kenneth 2014:64):

ԳՂ-ի ոլորտում կատարված մի շարք ուսումնասիրություններ նպատակաուղղված են բացահայտելու և քննության առնելու խոսքնկերների կռահումներն ու հետևությունները: Այստեղ կռահում ասելով՝ նկատի ունենք այն, որ խոսակիցների մոտ առկա է իրենց հասարակական դերի և արտաբերած ասույթների նշանակության փոխադարձ ընկալում և եզրակացություն: Ասվածը հստակեցնելու նպատակով դիտարկենք հետևյալ երկխոսությունները.

ա. *Doctor: Hi Jessica. How are you feeling today?*

Patient: A bit better.

Doctor: That's good to hear. Are you still feeling nauseous?

Patient: No, I haven't felt sick to my stomach since you switched my medication.

Doctor: Great. Say, your test results came in this morning.

(<https://www.englishclub.com/english-for-work/medical-diagnosis.htm>)

բ. *A: Hi Mary.*

B: Oh, hi.

A: How are you doing?

B: I'm doing alright. How about you?

A: Not too bad. The weather is great, isn't it?

B: Yes. It's absolutely beautiful today.

A: I wish it was like this more frequently.

B: Me too.

(<http://www.talkenglish.com/lessondetails.aspx?ALID=547>)

Վերոնշյալ երկխոսություններում միևնույն հարցի պատասխանը տարբեր է, քանի որ դրանք տեղի են ունենում տարբեր խոսքային իրադրություններում. առաջին երկխոսությունը բժշկական դիսկուրսից է, իսկ երկրորդը՝ առօրյա: Խոսքային այս իրադրություններում խոսակիցները հստակ գիտակցում և ընկալում են իրենց և դիմացինի սոցիալական դերը, որոշակի եզրահանգման են գալիս, և հետևաբար իրենց խոսքը կառուցում են տվյալ դիսկուրսի նորմերին

համապատասխան: Գիտակցելով, թե խոսքի ո՞ր տիրույթում է տեղի ունենում տվյալ երկխոսությունը՝ գրուցակիցները, դեռ գրույցը չսկսած, որոշակի ակնկալիքներ են ունենում հարցուպատասխանի ընթացքի վերաբերյալ:

ԳԳ-ի խոսքահերթի կանոնները նույնպես տարբեր են: ԳԳ-ում առկա են մի շարք տրամաբանական կանոններ, որոնց միջոցով կանոնակարգվում են գործարար և աշխատանքային հարցազրույցները, դատական և քննչական հարցաքննությունները և այլն: Այսպիսի երկխոսությունները հիմնականում հստակեցված ձևաչափ ունեն, որտեղ խոսքային ասույթների հերթականությունը դասավորվում է մասնավորապես ըստ հարց-պատասխան կաղապարի. հարցերը բաժին են հասնում հարցաքննողին, կառավարչին, դատավորին, քննիչին և այլն, իսկ պատասխանները՝ հարցաքննվողին, աշխատակցին, մեղադրյալին կամ վկային և այլն (Drew, Heritage 1992:37-40): ԳԳ-ին հատուկ խոսքահերթի առանձնահատկություններին և տարբերություններին վերաբերող ուսումնասիրությունները կատարվում են, օրինակ, դատական, իրավաբանական, բժշկական, գործարար դիսկուրսը սովորական առօրյա հաղորդակցության հետ համեմատելով, զուգադրելով և վերլուծելով:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, ԳԳ-ում խոսքահերթի համակարգերը կատարում են որոշակի գործողություններ կառավարելու և վերահսկելու գործառույթ՝ ի տարբերություն առօրյա երկխոսության: Ավելին, ընդհանուր առմամբ գերատեսչական հաղորդակցման խոսքահերթի կաղապարներն ունեն մի շարք տարբերություններ՝ առօրյա հաղորդակցման հետ համեմատած: Օրինակ, ԳԳ-ի տարբեր տեսակներին, ինչպիսիք են ուսուցիչ-աշակերտ, դասախոս-ուսանող, հարցաքննող-հարցաքննվող երկխոսությունները, հատուկ են հարց-պատասխան մոդելները: Փ. Դրյուն ուսումնասիրում է ուսուցիչ-աշակերտ երկխոսությունը, որը բնորոշվում է հարց-պատասխան կաղապարով, և որտեղ հարցաքննողը, տվյալ դեպքում ուսուցիչը, իր հարցը տալիս է այնպես, որ իր հարցի մեջ ձևավորում է պատասխանը և կրկին հարց կազմում (տե՛ս van Dijk 1997:106): Լսարանային խոսքը սովորաբար կառավարվում է հարց-պատասխան ձևաչափով, որի ընթացքում ուսուցիչը կատարում է աշակերտի պատասխանի գնահատում: Դիտարկենք հետևյալ հնարավոր խոսքային ակտը.

1. *Ուսուցիչ - Կարող ես ասել, թե ինչու՞ ես գրառումներ անում նոթատետրումդ:*
2. *Աշակերտ - Այո:*
3. *Աշակերտ - Որպեսզի մտապահեմ ասվածը:*
4. *Ուսուցիչ - Որպեսզի մտապահես ասվածը: Այո: Որպեսզի մտապահես ասվածը: Ինչու՞ ես ցանկանում մտապահել ասվածը. . .*

Չորրորդ տողում կրկնությունների միջոցով ուսուցիչն արտահայտում է իր համաձայնությունը: Հետևաբար, տվյալ կառույցի միջոցով ուսուցիչը հաստատում է պատասխանի ճշմարիտ լինելը, այսինքն՝ նա գնահատում է ասույթի ինչպիսին լինելը: Նմանատիպ գնահատումը հատուկ է ուսուցիչ-աշակերտ, դասախոս-ուսանող երկխոսություններին, այն է՝ դասավանդման գործընթացին, և հետևաբար, հազվադեպ կարելի է հանդիպել առօրյա հաղորդակցման ընթացքում: Առօրյա երկխոսության հարց-պատասխան կաղապարն իր հերթին ունի այնպիսի առանձնահատկություններ, որոնք հատուկ չեն Գ-Գ-ին: Օրինակ, ըստ Ջ. Հերիթիջի, “oh” բացականչությունը տիպիկ է միմիայն առօրյա հաղորդակցմանը, որի գործաբանական նշանակությունն այն է, որ ասվածը խոսակցի համար նորություն էր կամ բացահայտում, և որ խոսակիցը համաձայն է և ընդունում է ասվածը: Հերիթիջի պնդմամբ՝ “oh” բացականչությունը բացակայում է այնպիսի Գ-Գ-ում, ինչպիսիք են պաշտոնական հարցազրույցները, ուսուցիչ-աշակերտ, դատական երկխոսությունները: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալ իրադրություններում հարցաքննողները նախապես, նախքան հարցաքննությունը սկսելը, տեղեկացված են և պատկերացում ունեն հնարավոր պատասխանների մասին: Ուստի հարցին տրվող պատասխաններն անակնկալի չեն բերում հարցաքննողին: Հարկ է նշել, որ հարցազրույցի դեպքում առաջնային պատասխան ստացողը ոչ թե հարցազրույց վարողն է, այլև հանդիսատեսը, ունկնդիրը, հետևաբար հարցաքննողները սովորաբար իրենց խոսքից բացառում են “oh” բացականչությամբ սկսվող ասույթները: Դրանով նրանք չեզոք դիրք են գրավում և իրենց վերագրում են երկխոսություն վարողի, այլ ոչ թե խոսքի առաջնային հասցեատիրոջ դեր (տե՛ս van Dijk 1997:107):

Եզրակացություն

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Գ-Գ ուսումնասիրելիս նախ պետք է սահմանել, թե գերատեսչական որ տեսակին է պատկանում տվյալ հաղորդակցությունը: Այնուհետև պետք է որոշել, թե արդյո՞ք այս կամ այն լեզվական տարրը, կառույցը կամ ցուցիչը ունի տվյալ գերատեսչությանը ներհատուկ բնույթ, թե՞ այդ իմաստը դրսևորվում է Գ-Գ-ում կիրառվելիս: Դիսկուրսի գերատեսչական լինելը, դրա այս կամ այն տեսակին պատկանելը բացահայտվում է առօրյա երկխոսությունը և ուսումնասիրվող դիսկուրսը զուգադրելու ու համեմատելու միջոցով: Կարևոր է ուսումնասիրել, թե լեզվական ո՞ր տարրերի ընտրությամբ են Գ-Գ-ի մասնակիցները իրագործում իրենց գերատեսչական նպատակները, առաջադրանքները և գործողությունները: Հետևաբար, լեզվի կիրառման տարբեր ոլորտները (բառերի ընտրություն, քերականական, շարահյուսական կառույցներ, խոսքահերթ, գործաբանական կռա-

հում) ուսումնասիրելու միջոցով կարելի է լուսաբանել սովյալ ԳԴ-ի հաղորդակցական-գործարանական առանձնահատկությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պարոնյան, Շ. (2011) *Լեզվաճանաչողություն և դիսկուրս*. Երևան: ԵՊՀ հրատարակչություն:
2. Bargiela-Chiapinni, F.; Nickerson, C., Planken; B. (2007) *Business Discourse*. Palgrave: Macmillan.
3. Cotton, D.; Falvey. D.; Kent, S. (2007) *Market Leader. Pre-intermediate business English course book*. England: Pearson Longman Press.
4. Drew, P.; Heritage, J. (1992) *Talk at Work*. Cambridge: CUP.
5. Ford, C.; Fox, B.; Thompson, S. (eds.) (2002) *The Language of Turn and Sequence*. Oxford: OUP.
6. Gago, P.C. (2006) *Question-Answer Sequences in Conciliation Hearings and Interviews with Political Candidates*. Estudios de Sociolingüística 7(1).
7. Goodwin, Ch. (1981) *Conversational Organization: Interaction between Speakers and Hearers*. N.Y.: Academic Press.
8. Kenneth, K. (2014) *Professional Discourse*. Cambridge: CUP.
9. Mayr, A. (2008) *Language and Power. An Introduction to Institutional Discourse*. London: Continuum International Publishing Group.
10. *Medical Diagnosis*. / English Club. Available at: <<https://www.englishclub.com/english-for-work/medical-diagnosis.htm>> [Accesed March 2016].
11. *Mock Trial Script*. / Superior Court of California. Available at:<<http://www.courts.ca.gov/documents/mocktrialsript-contra.pdf>> [Accesed January 2016].
12. O’Hair, D.; Wiemann, M. (2012) *Real Communication*. 2nd edition. Boston: Bedford/ St. Martin’s.
13. Schegloff, E.A. (1991) *Reflections on Talk and Social Structure: Talk and Social Structure*. / Ed. by D. Boden and D.H. Zimmerman. Berkeley: University of California Press.
14. Tannen, D.; Hamilton, H.E., Schiffrin, D. (eds.) (2015) *The Handbook of Discourse Analysis*. Second Edition, Vol. 1. Oxford: John Wiley & Sons, Inc.
15. *Useful Phrases in English*. Available at: <<http://www.talkenglish.com/lessondetails.aspx?ALID=547>> [Accesed March 2016].
16. Van Dijk, T. (1997) *Discourse as Social Interaction*. London: Sage Publications.
17. Van Dijk, T. (2006) *Discourse and manipulation*. London: Sage Publications.

18. Van Dijk, T. (2009) *Society and Discourse: How Social Contexts Influence Text and Talk*. Cambridge: CUP.
19. Григорьева, В.С.; Любимова, М.К. (2006) *Элементы теории и практики делового дискурса*. Тамбов: Издательство ТГТУ.
20. Карасик, В.И. (1991) *Язык Социального статуса*. М.: Академия Наук.

Institutional Discourse as a Type of Communication

People are social creatures. They socialize by sharing ideas, experience, information. They enjoy verbal interaction, and in doing so, they try to impress each other. Thus, the process of communication, i.e. discourse, which often proceeds in the form of exchanging ideas, is conducted either orally or in written form through linguistic as well as extra-linguistic means. The subject of the given article is institutional discourse. The main characteristic features of institutional discourse distinguishing it from other functional types of discourse are revealed.

Институциональный дискурс как тип коммуникации

Человек, являясь социальным существом, на любом этапе жизни, а также в любой среде, безусловно, общается с окружающим его миром, стремясь делиться идеями и опытом, обмениваться информацией, получать удовольствие от процесса общения, производить впечатление, влиять на других и т.д. Таким образом обеспечивается процесс общения, дискурс, диалог, а именно – обмен мнениями, в устной или письменной формах, с использованием языковых и неязыковых средств. В данной статье изучается институциональный дискурс, определяются характерные особенности данного типа общения.